



«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2019 թվականի մայիսի 29-ի 19-05-07-11 որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու պայմանների և կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հիմնադրամի պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհվում է՝

1) ՀՀ կամ օտարերկրյա գիտական, կրթական ուսումնական հաստատությունների պրոֆեսորներին՝ Հիմնադրամի հետ շարունակական և արդյունավետ համագործակցության համար կամ.

2) հիմնադրամի աշխատակիցներին՝ հիմնադրամում մեծ ներդրման և երկարամյա աշխատանքի համար՝ սույն կանոնակարգով սահմանված պահանջները բավարարելու դեպքում:

2. Հիմնադրամի պատվավոր պրոֆեսորի կոչումը շնորհվում է հիմնադրամի նոմինացիոն կոմիտեի դրական եզրակացության հիման վրա՝ գիտական խորհրդի նիստում՝ բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ ընդունված որոշման հիման վրա:

3. Հիմնադրամի աշխատակիցների թվից պատվավոր պրոֆեսորի կոչմանը կարող է հավակնել այն անձը, որը բավարարում է ստորև սահմանված պահանջներից ցանկացած առնվազն ութը.

1) գիտությունների դոկտորի աստիճանի և պրոֆեսորի գիտական կոչման առկայություն.

2) Հիմնադրամում ամբիոնի վարիչի կամ ամբիոնի պրոֆեսորի ոչ պակաս, քան 35 տարվա աշխատանքային ստաժ,

3) բժշկագիտության կամ դեղագիտության կամ հանրային առողջապահության ոլորտում 45 և ավելի տարվա գիտամանկավարժական աշխատանքի անընդմեջ ստաժ.

4) Հիմնադրամում գիտական ուղղության հիմնադիր.

5) Հիմնադրամում նոր և գործող կառուցվածքային ստորաբաժանման հիմնադիր (ամբիոն, լաբորատորիա, նորարարական կենտրոն).

6) ՀՀ կամ օտարերկրյա ազգային կամ պետական ակադեմիաների անդամ կամ ՀՀ գիտության վաստակավոր գործիչ կամ ՀՀ կամ այլ պետությունների պետական պարգևների մրցանակակիր.

7) գիտությունների 10 և ավելի թեկնածուների և գիտությունների 3 և ավելի դոկտորների պատրաստում, 100 և ավելի գիտական աշխատանքների առկայություն.

8) հայերեն և այլ լեզուներով հրատարակված դասագրքերի հեղինակ կամ համահեղինակ.

9) գյուտի կամ օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի հեղինակ.

10) նախկինում կամ ներկայում Հիմնադրամի ղեկավար (ռեկտոր կամ պրոռեկտոր կամ ֆակուլտետի ղեկան) կամ պետական պաշտոններում պաշտոնավարում:

4. Հիմնադրամի պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու առաջարկությամբ կարող են հանդես գալ ռեկտորը կամ ռեկտորատը կամ ֆակուլտետները՝ պրոռեկտորների միջոցով, որոնք գրավոր առաջարկը ներկայացնում են նոմինացիոն կոմիտեին: Գրավոր առաջարկը ստանալուց հետո նոմինացիոն կոմիտեն պարտավոր է տասօրյա ժամկետում սույն կանոնակարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում ստանալ հիմնադրամի պատվավոր պրոֆեսորի թեկնածուի համաձայնությունը, դրա առկայության դեպքում, թեկնածուից պահանջել թեկնածուի համար սույն կանոնակարգով սահմանված պահանջները հավաստող փաստաթղթեր (տվյալներ):

5. Կանոնակարգի 2-րդ կետի 1-ին (գրավոր առաջարկը ստանալուց հետո) կամ 2-րդ (թեկնածուի համաձայնությունը և անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալներ) ստանալուց հետո) ենթակետերով նախատեսված դեպքերում նոմինացիոն կոմիտեն քննում և դրական կամ բացասական եզրակացությունը տրամադրում է 7-օրյա ժամկետում: Հիմնադրամի պատվավոր պրոֆեսորի թեկնածուի հարցի քննարկման դեպքում, եթե թեկնածուն հանդիսանում է նոմինացիոն կոմիտեի անդամ, ապա նա չի կարող մասնակցել իր մասով եզրակացություն տրամադրելու համար անցկացվող քվեարկությանը:

6. Նոմինացիոն կոմիտեի կողմից տրված բացասական եզրակացությունը եռօրյա ժամկետում տրամադրվում է առաջարկը ներկայացրած ռեկտորին կամ ռեկտորատին կամ պրոռեկտորին, իսկ դրական եզրակացության դեպքում՝ գիտական խորհրդի

քարտուղարություն՝ հիմնադրամի պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու գործընթացը սահմանված կարգով կազմակերպելու համար:

7. Հիմնադրամում իր հիմնական աշխատանքից ազատվելու դեպքում Հիմնադրամի աշխատակից հանդիսացող պատվավոր պրոֆեսորի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է կնքվել աշխատանքային պայմանագիր՝ հետևյալ աշխատանքները իրականացնելու համար.

1) ամբիոնի վարիչին և դասախոսներին գիտամանկավարժական, մեթոդական և կազմակերպչական աջակցություն.

2) ամբիոնի գործունեության ոլորտն ընդգրկող գիտական թեմաների մշակման աշխատանքների իրականացում.

2) ուսանողների, կլինիկական օրդինատորների, ասպիրանտների խորհրդատվություն.

3) դասախոսություններ:

8. Հիմնադրամի պատվավոր պրոֆեսորի համար սույն կանոնակարգի 7-րդ կետով նախատեսված դեպքերում հիմնադրամը ապահովում է աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններ:

9. Սույն կանոնակարգի 7-րդ կետով նախատեսված դեպքերում Հիմնադրամի պատվավոր պրոֆեսորի աշխատավարձը չի կարող գերազանցել նրա՝ Հիմնադրամում զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված աշխատավարձի չափի 75 տոկոսը: